Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
փետրվարի 2-ի N 138 - Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ռազմավարական նպատակն է բարձրացնել Հայաստանի տեքստիլ ոլորտի մեկ աշխատանքային ժամում գոյացող Ավելացված արժեքի ցուցանիշը: Սա նշանակում է, որ հանրային քաղաքականությունը պետք է ուղղված լինի Ավելացված արժեքի բարձրացմանը և նպաստի ու խթանի ամենաբարձր արտադրողականություն և հաջողության հասնելու ամենամեծ ներուժ ունեցող ընկերությունների զարգացումը: Ստորև թվարկված բոլոր ծրագրերը վերաբերում են այն ընկերություններին, որոնք գերազանցում են Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված Ավելացված արժեքի ցուցանիշի տարեկան շեմը (բացառությունները հատուկ նշվում են):

**Սույն հավելվածով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը կիրականացվի յուրաքանչյուր տարի հաստատվող պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի շրջանակներում:*

***Շահառուի կողմից՝ սույն հավելվածի 3.6-րդ, 5.6-րդ, 5.7-րդ և 6.11-րդ կետերով սահմանված, շահութահարկի փոխհատուցում նախատեսող երկու և ավել միջոցառումներից օգտվելու դեպքում՝ փոխհատուցման հանրագումարը չպետք է գերազանցի վերջինիս կողմից վճարված շահութահարկի 100%-ը:*

	Միջոցառումներ	Նկարագրություն	2023				2024				2025				2026				Պատասխանատու մարմին	Ցուցանիշ	Ելքային տվյալներ					Ֆինանսական կանխատեսումներ, մլն դրամ					
																					Բազային տվյալ	2023	2024	2025	2026	2023	2024	2025	2026	Ընդհանուր	Ֆինանսական հաշվարկների պարզաբանում
			I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV								ՊԵՏ ԲՅՈՒՋԵ/ՕՐԵՆՔՈՎ ՉԱՐԳԵԼՎԱԾ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ*					
1	**Իրականացնել ինստիտուցիոնալ լուծումներ**, որոնք կփոխեն տեքստիլ արդյունաբերության մակրոկառավարման և մոնիտորինգի գործընթացները																									**132.50**	**120.35**	**114.20**	**108.05**	**475.10**	
1.1.	Ստեղծել տեքստիլ ոլորտի Օպերատոր, որը գործելով հանրային և մասնավոր գործընկերության սկզբունքի հիման վրա կնպաստի ոլորտի արդյունավետ և համակարգված զարգացմանը, նոր ռազմավարությունների և զարգացման ծրագրերի իրականացմանը:	1. Օպերատորը և նրա գործունեությունը պետք է հիմնված լինեն Հայաստանի խաղողի և գինու հիմնադրամի ստեղծման փորձի վրա 2. Հոգաբարձուների խորհուրդը որպես օպերատոր կառավարման և վերահսկողության գերագույն մարմին, պետք է կազմված լինի պետական մարմինների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներից																	Էկոնոմիկայի նախարարություն	Օպերատորի վարչական բյուջեում տեքստիլ ոլորտի կորպորատիվ բիզնեսի մասնաբաժինը	0%	0%	5%	10%	15%	2023 Այլ	2024 Պետ Բյուջե*	2025 Պետ Բյուջե*	2026 Պետ Բյուջե*	**455.10**	Օպերատորի տարեկան վարչական բյուջեի հաշվարկները հիմնված են մի քանի ենթադրությունների վրա. - մոտ 5 անձի միջին շուկայական աշխատավարձը՝ ամսեկան մինչեւ 500000 դրամ (Glassdoor Data) + բարձր որակավորում ունեցող միջազգային գործադիր տնօրենի աշխատավարձը մոտ 10000 ԱՄՆ դոլար, - առաջին տարում ներառվել են անձնակազմի համար սարքավորումների գնման ծախսերը (մինչեւ 5 նոութբուք՝ յուրաքանչյուրը մոտ 1500 ԱՄՆ դոլար, տպիչ՝ մոտ 700 ԱՄՆ դոլար, մոտ 5 աշխատատեղերի համար նախատեսված կահույք՝ մոտ 1,500 ԱՄՆ դոլար մեկ

| | | |

1.3.	Տարեկան կտրվածքով հաշվարկել տեքստիլ ոլորտի բոլոր ընկերությունների մեկ աշխատանքային ժամում գոյացող ավելացված արժեքի ցուցանիշը, որի հիման վրա ընտրել սահմանված տարեկան շեմից բարձր ընկերությունների ցանկը: Պետության կողմից աջակցությունը տրամադրվում է հիմնականում այդ ընկերությունների համար: Հրապարակել սահմանված տարեկան շեմը և ընտրված ընկերությունների ցանկը:	1. Ավելացված արժեքի ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ տարբերակով. Մեկ աշխատանքային ժամում ավելացված արժեքը = Ընկերության ընդհանուր ավելացված արժեք / Ընդհանուր աշխատանքային ժամեր Ընկերության Ընդհանուր ավելացված արժեք = Աշխատողներին վճարված ընդհանուր աշխատավարձ և փոխհատուցումներ + Գործառնական շահույթ մինչև հարկումը + Մաշվածություն 2. Տվյալների հաշվարկը կիրականացվի ընթացիկ տարում՝ նախորդ տարվա տվյալների հիման վրա (ընկերության կողմից ներկայացված հատուկ հաշվետվության հիման վրա)՝ ընթացիկ տարում աջակցություն ցուցաբերելու նպատակով 3. Պետական աջակցության ծրագրում ընդգրկվող ընկերությունների ընտրության համար նախատեսված ավելացված արժեքի շեմը պետք է յուրաքանչյուր տարի որոշվի՝ ելնելով ծրագրին պետության կողմից հատկացված բյուջեից, ինչպես նաև աջակցության համար ընկերությունների դիմումներից 4. Ավելացված արժեքի շեմը պետք է տարեցտարի ավելանա 5. Պետական աջակցությունը պետք է տրամադրվի մեկ ժամում ավելացված արժեքի հիման վրա՝ ամենաբարձր արտադրողականություն ունեցող ընկերություններին խթանելու համար																Էկոնոմիկայի նախարարություն	Շահառու ընկերությունների քանակ	20	22	24	25	25					-	Տեխնիկական առաջադրանքները գտնվում են Օպերատորի կամ նախարարության պատասխանատվության ներքո և ծախսեր չեն նախատեսում
1.4.																					Շահառու ընկերությունների աշխատողների մասնաբաժինը ոլորտի աշխատողների ընդհանուր թվաքանակում	82%	83%	84%	85%	85%					-	Տեխնիկական առաջադրանքները գտնվում են Օպերատորի կամ նախարարության պատասխանատվության ներքո և ծախսեր չեն նախատեսում
1.5.	Հիմնվելով շարունակական մոնիթորինգի արդյունքների վրա պատրաստել տարեկան ներքին հաշվետվություններ՝ ոլորտում մեկ աշխատանքային ժամում գոյացող ավելացված արժեքի ցուցանիշի փոփոխությունների վերաբերյալ:																	Էկոնոմիկայի նախարարություն	Ավելացված Արժեքի շեմի աճի տեմպ	14%	20%	33%	19%	21%	1.50	1.50	1.50	1.50	**6.00**	Խորհրդատվական ծառայությունների վճարները և հրատարակչական ծախսերը յուրաքանչյուր տարվա համար հաշվարկվում են հիմնվելով շուկայական գների վրա (Տպագրական տեղեկատվության աղբյուրը՝ AG Print Consulting).
1.6.	Հիմնվելով շարունակական մոնիթորինգի արդյունքների վրա պատրաստել տարեկան հաշվետվություններ ծրագրի արդյունքների վերաբերյալ:																	Էկոնոմիկայի Նախարարություն	Ծրագրի արդյունքների վերաբերյալ հրապարակված հաշվետվություն		+	+	+	+					-	Նշված տեխնիկական առաջադրանքները գտնվում են Օպերատորի կամ նախարարության պատասխանատվության ներքո և ծախսեր չեն նախատեսում
1.7.	Կազմակերպել ռազմավարության իրականացման ընթացքի վերաբերյալ տարեկան նիստեր, որտեղ քննարկվելու են Ավելացված արժեքի ցուցանիշի փոփոխության																	Էկոնոմիկայի Նախարարություն	Թարմացված Ռազմավարություն		+	+	+	+	2.00	2.00	2.00	2.00	**8.00**	Ռազմավարության ընթացքի քննարկման միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերը յուրաքանչյուր տարվա համար (տարածքի վարձակալություն, սնունդ, PR և մարքեթինգ) հաշվարկվում են հիմնվելով

	ընթացքը, ոլորտի միտումները և ծրագրի արդյունքները, ներառյալ գենդերային ուղղորդման արդյունքներ: Անհրաժեշտության դեպքում ծրագրերում կատարվելու են փոփոխություններ և լրացումներ:																																շուկայական գների վրա (աղբյուրը՝ SaegePR):
2	**Բարելավել տեքստիլ ոլորտի աշխատողների մրցունակությունը** (հմտություններ, որակ և արտադրողականություն),																											**410.03**	**557.08**	**645.11**	**694.85**	**2,307.23**	
2.1.	Ստեղծել "ArmSkills" հարթակը (հիմք ընդունելով WorldSkills Int. ձևաչափը), որը ամեն տարի կանցկացնի տեքստիլ ոլորտում առկա տարբեր մասնագիտությունների համար մրցույթներ: Հաղթողների համար նախատեսվում են պարգևներ	1. ArmSkills հարթակի ստեղծումը կնպաստի տեքստիլի ոլորտում որակավորումների կարգավիճակի և չափանիշների բարձրացմանը, ինչպես նաև ոլորտում առկա մասնագիտությունների մասսայականացմանը: Հարթակի ստեղծման գործընթացը հետևյալն է. 2. Մրցույթների կազմակերպումը պետք է ֆինանսավորվի Օպերատորի մեխանիզմների միջոցով (PR-ի և ՁԼՄ-ների աջակցությամբ) : 3. Մրցույթների արդյունքների վերաբերյալ պետք է կազմվի տարեկան հաշվետվություն: 4. Հաղթողները կընտրվեն որակավորման 7 չափանիշների հիման վրա, որոնք սահմանվում են Fashion Technology WSOS-ի կողմից. 5. Մրցույթները պետք է անցկացվեն մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքների պահպանմամբ: 6. Հայաստանում տեքստիլ ոլորտի մասնագիտությունների պահանջարկը պարզելու համար անցկացվելու են տարեկան հարցումներ:																	Օպերատոր	ArmSkills մասնակիցների թիվ	0	50	100	200	200	3.50	7.00	14.00	14.00	**38.50**	Հաշվարկված է Կառավարության կողմից ֆինանսավորվող նմանատիպ միջոցառումների ծախսերի հիման վրա. 2022 թվականին «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպման պետական ծախսերը գնահատվել են 35 մլն. դրամ: Այս միջոցառման մասնակիցների թիվը մոտավոր համընկնում է ArmSkills-ի մասնակիցների թվի հետ, և գումարը տարեց տարի ինդեքսավորվում է՝ հաշվի առնելով մասնակիցների թվի աճը
2.2.	ֆինանսավորել ArmSkills-ի հաղթողների ամենամյա մասնակցությունը WorldSkills միջազգային մրցույթներում																				Օպերատոր	Հայաստանի մասնակիցների WorldSkills-ի վարկանիշը	30	25	20	20	15		6.00	6.48	7.00	**19.48**	Ճանապարհածախսեր (500 ԱՄՆ դոլար ավիատոմս մեկ անձի համար), գիշերակաց (1000 ԱՄՆ դոլար հյուրանոցի արժեքը մեկ անձի համար 5 գիշեր), մասնակցության վճար (3000 ԱՄՆ դոլար) - ընդհանուր առմամբ 3 անձի և 3 աջակցող անձի համար:

| | | |

2.6.	100%-ով փոխհատուցել վերապատրաստման դասընթացների մասնակիցների աշխատավարձի գծով մեկ տարվա ընթացքում գոյացած եկամտահարկի գումարը, եթե մասնակիցը վերապատրաստումից հետո շարունակում է աշխատել ընկերությունում առնվազն 1 տարի: Առավելագույն փոխհատուցումը 1 աշխատակցի համար կազմում է ամսեկան 50.000 դրամ: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																		Էկոնոմիկայի Նախարարություն	Տեքստիլ ոլորտում նոր աշխատողների թիվը	800	600	300	300	300	64.53	35.49	40.81	44.89	**185.72**	Նոր աշխատողների թիվը բազմապատկած 1 տարվա եկամտային հարկով (հիմք ընդունելով "Արդյունքներ" թերթիկում ներկայացված միջին աշխատավարձի կանխատեսումը: Ընդորում 1 տարվա աշխատողի միջին աշխատավարձը հաշվարկվել է ներկայացված միջին աշխատավարձի 70%-ի չափով).
2.7.	Ոլորտում աշխատող կանանց համար ստեղծել հատուկ սոցիալական պայմաններ՝ հաշվի առնելով ոլորտի գենդերային առանձնահատկություններ ը: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																													
2.7.1.	Փոխհատուցել տեքստիլ ընկերության տարածքում երեխայի խնամքի տարածք ստեղծելու նպատակով իրականացված կապիտալ ծախսերի 50%-ը, եթե մինչև տարեվերջ այդ մանկապարտեզ և/կամ ցերեկային կենտրոն հաճախող աշխատողների երեխաների թիվը 20-ից ավելի է: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																		Էկոնոմիկայի Նախարարություն	Մանկապարտեզ-ների քանակը		1	3	4	4	25.00	50.00	25.00		**100.00**	Ենթադրվում է կառուցել 2023 թվականին՝ 1, 2024 թվականին՝ 2 և 2025 թվականին ևս 1 մանկապարտեզ: Կառուցման հաշվարկները հիմնված են աշխատողների թվի և դրա համար ֆինանսավորում տրամադրել ցանկացող ընկերությունների քանակի վրա: Մեկ մանկապարտեզի կապիտալ ծախսերի արժեքը հիմնված է Հայաստանի (մասնավորապես՝ Երևան քաղաքի) տեղական բյուջեներում ընդգրկված մանկապարտեզների վերակառուցման համար նախատեսված ծախսերի միջին արժեքի վրա՝ ներառյալ ՄԱԿ-ի ծրագրում ընդգրկված՝ 25 մլն. դրամ
2.7.2.	Փոխհատուցել ոլորտի ընկերության աշխատակիցների աշխատավարձի գծով վճարված եկամտային հարկի 10%-ը, եթե աշխատողը ընդգրկված է օրեկան սննդի ապահովման ծրագրում: Ամսեկան գումարի փոխհատուցումը մեկ աշխատողի համար չպետք է գերազանցի 10000 դրամը: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																		Էկոնոմիկայի Նախարարություն	Սննդի ապահովման ծրագրում ընդգրկված տեքստիլ ոլորտի աշխատողների մասնաբաժինը	8%		15%	20%	30%		68.09	109.62	184.49	**362.19**	Օրեկան սննդի ապահովման ծրագրում ներառված ոլորտի աշխատակիցների մասնաբաժինը բազմապատկվել է յուրաքանչյուր տարվա աշխատողների թվով, յուրաքանչյուր տարվա միջին աշխատավարձի կանխատեսումով (տես "Արդյունքներ" թերթիկ) և եկամտային հարկի դրույքաչափով (20%): Հաշվարկները կատարվել են 1 տարվա համար:

2.8.	Փոխհատուցել ոլորտի ընկերության կողմից արտասահմանից ներգրաված բարձր որակավորում ունեցող տեքստիլ տեխնոլոգների և կոնստրուկտավորողների (տեխնիկական գծագրողների) աշխատավարձի 25%-ը : Տվյալ մասնագետները պետք է համապատասխանեն էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված չափանիշներին և Հայաստանում աշխատեն ոչ պակաս, քան 6 ամիս: Մեկ ընկերության համար փոխհատուցման տարեկան գումարների ֆիքսված սահմանաչափը նախապես հաստատվում է: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:	1. Էկոնոմիկայի նախարարությունը ամեն տարի սահմանում և հրապարակում է օտարերկրյա բարձր որակավորում ունեցող տեքստիլ տեխնոլոգների և կոնստրուկտավորողների վերաբերյալ չափանիշների ցանկը: 2. Էկոնոմիկայի նախարարությունը ամեն տարի հաստատում է մեկ ընկերության համար նախատեսված փոխհատուցման գումարի ֆիքսված սահմանաչափը:																			Էկոնոմիկայի Նախարարություն	Արտասահմանյան բարձր որակավորում ունեցող տեքստիլ տեխնոլոգների և կոնստրուկտավո-րողների թիվը	0	5	7	10	10	75.00	105.00	150.00	150.00	**480.00**	Փոխհատուցման չափը բազմապատկվել է բարձր որակավորում ունեցող օտարերկրյա տեքստիլ տեխնոլոգների և կոնստրուկտավորողների թվով և նրանց ամսեկան աշխատավարձով, որը ըստ Glassdoor-ի տվյալների կազմում է 10,000 ԱՄՆ դոլար
2.9.	Պատրաստել տեքստիլ ոլորտի մասնագիտությունների համար նախատեսված կրթական նոր ծրագիր, որը կիրականացվի տեքստիլի ոլորտում գործող ՏՀՁԿ կրթական հաստատությունների հետ համատեղ :	Համաձայն տեքստիլ ոլորտի ռազմավարության ուղղությունների և հետևելով ընթացիկ մարտահրավերներին Օպերատորը Կրթության, էկոնոմիկայի նախարարության և անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվական կազմակերպությունների հետ միասին պետք է վերլուծի համաշխարհային պրակտիկան և Հայաստանի տեքստիլ արդյունաբերության կարիքները:																			Օպերատոր Կրթության, գիտու-թյան, մշակույթի և սպորտի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն	Ուսումնական պլանի առկայությունը մինչև 2023 թվականի հունիսի վերջ		+				35.00				**35.00**	Շուկայական գներով հաշվարկված կրթության կառավարման վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների 6 ամսվա վճար
2.10.	Տեքստիլ ոլորտի մասնագիտությունների համար պատրաստված կրթական ծրագրի իրականացման ֆինանսավորում																				Օպերատոր Կրթության, գիտու-թյան, մշակույթի և սպորտի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն	Նոր կրթական ծրագրի համաձայն ուսուցանվող տեքստիլ ոլորտի ուսանողների քանակը		10	20	25.00	30	40.00	80.00	100.00	120.00	**340.00**	Հաշվարկը կատարվել է Ռուսաստանի բուհերում համատեղ կրթական ծրագրերում ընդգրկված մեկ ուսանողի համար պահանջվող միջին ծախսերի հիման վրա, որը կազմում է 8000 ԱՄՆ դոլար
2.11.	Ներդնել դրամաշնորհային մրցակցային համակարգ, որի միջոցով յուրաքանչյուր տարի կընտրվեն լավագույն 3 երիտասարդ մասնագետներ, որոնք ընտրված մասնագիտությունների գծով կրթություն կստանան արտասահմանում՝ պարտադիր վերադարձի և Հայաստանում առնվազն 2 տարվա աշխատանքի շարունակության պայմանով:	1. Օպերատորը յուրաքանչյուր տարի կազմում է այն մասնագիտությունների ցանկը, որոնք հատուկ մասնագիտական գիտելիքներ են պահանջում: 2. Օպերատորը հիմնվելով առկա մասնագիտությունների ցանկի վրա, ամեն տարի կազմում է արտասահմանյան համալսարանների և ուսումնական կենտրոնների ցուցակը և նրանց հետ պատրաստում է գործընկերային ծրագրեր՝ անհրաժեշտ թվով տեղեր ապահովելու համար: 3. Օպերատորը տարեկան կտրվածքով հայտարարում է ներկայացված ծրագրերի																			Օպերատոր	Մասնակիցների թիվ		20	30	40	40	64.50	64.50	64.50	64.50	**258.00**	Հաշվարկվել է Մանչեսթերի համալսարանի տեքստիլ տեխնոլոգիաների ուսումնասիրության դասընթացների միջազգային (ներառյալ ԵՄ-ից), ուսանողների տարեկան վարձերի հիման վրա, որոնք կազմում են 26,000 ֆունտ ստեռլինգ.

		շրջանակներում դրամաշնորհների մրցույթ և իրականացնում է համապատասխան ընտրությունը: 4. Մրցույթը անցկացվում է մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքների պահպանմամբ: Օպերատորը լիարժեք կերպով աջակցում է դրամաշնորհ ստացած մասնագետներին ուսման ընթացքում և ուսման ավարտից հետո:																															
2.12.	Միանվագ գումար վճարել այն տեքստիլ ընկերություններին, որոնք դպրոցներում ստեղծում են տեքստիլ լաբորատորիաներ: Վճարումը իրականացվելու է, եթե լաբորատորիայում 1 տարվա ընթացքում վերապատրաստում անցած մասնակիցների թիվը գերազանցում է 50 հոգին:	Առաջարկվում է դպրոցներում ստեղծել տեքստիլ լաբորատորիաներ՝ "Արմաթ" լաբորատորիաների սկզբունքով:																			Էկոնոմիկայի Նախարարություն	Տեքստիլ լաբորատորիա-ների քանակը դպրոցներում			1	3	5		5.00	10.00	10.00	**25.00**	Հաշվարկը հիմնված է «Արմաթ» լաբորատորիայի ստեղծման համար պահանջվող նմանատիպ ծախսերի վրա, որը կազմում է 10000 ԱՄՆ դոլար: 2024 թվականին՝ 1 լաբորատորիա, 2025 թվականին՝ 2, 2026 թվականին՝ 2
2.13.	Աջակցման ծրագրերի ներքո գտնվող ընկերություններից պահանջել կնքել 5 հուշագիր էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված կրթական հաստատությունների հետ՝ ծրագրի իրականացման ժամանակահատվածում ուսանողների համար էքսկուրսիաներ կազմակերպելու նպատակով:	1. Յուրաքանչյուր տարի Օպերատոր ը համագործակցելով էկոնոմիկայի և Կրթության նախարարությունների հետ որոշում և հրապարակում է ընտրված կրթական հաստատությունների ցանկը: 2. Օպերատորը պետք է միջնորդ հանդիսանա ընկերությունների և դպրոցների միջև՝ հուշագրեր ստորագրելու և էքսկուրսիաներ իրականացնելու հարցում:																			Օպերատոր, Կրթության, գիտու-թյան, մշակույթի և սպորտի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն	Տեքստիլ արտադրող ընկերությունների և դպրոցների կողմից համատեղ զեկուցված էքսկուրսիաների թիվը		20	28	40	40					**-**	Ծախսերն ամբողջությամբ փակում է ընկերությունը
2.14.	Փոխհատուցել 1 տարվա ընթացքում ոչ ավելի քան 3 ամսվա ընթացքում մատուցված խորհրդատվական ծառայությունների արժեքի 50%-ը (խորհրդատվական ընկերությունների ցանկը մրցութային հիմունքներով հաստատում է էկոնոմիկայի նախարարությունը): Այդ ծառայությունները պետք է մատուցվեն հատուկ հմտությունների զարգացման ոլորտում, ներառյալ նոր սարքավորումների և տեխնիկական լուծումների կառավարում: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																				Էկոնոմիկայի Նախարարություն	Ծահառու տեքստիլ ընկերությունների քանակը	0.00	10	12	15	10	25.00	30.00	37.50	25.00	**117.50**	Փոխհատուցման չափը բազմապատկվել է շահառու տեքստիլ ընկերությունների թվով և յուրաքանչյուր ընկերության համար մատուցված խորհրդատվության դիմաց վճարված միջին շուկայական արժեքով
3	**Օպտիմալացնել և արդիականացնել բիզնես գործընթացները՝** նպաստելով արդյունավետության և արտադրողականության բարձրացմանը																											**39.00**	**34.00**	**79.85**	**95.87**	**248.72**	

3.1.	Տեքստիլ ոլորտում արդյունավետ բիզնես գործընթացների զարգացման ուղեցույց ստեղծելու նպատակով ներգրավել համապատասխան խորհրդատվական ընկերություն: Ուղեցույցը կհրապարակվի ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում՝ այն հասանելի դարձնելով տեքստիլ ընկերություններին և լայն հանրությանը:																			Էկոնոմիկայի նախարարություն	«Տեքստիլ ոլորտում արդյունավետ բիզնես գործընթացների զարգացում» ուղեցույցը հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում		+				15.00				**15.00**	6 ամիս տևողությամբ խորհրդատվական ծառայությունների վարձավճար
3.2.	Փոխհատուցել Հայաստանում գործող բոլոր տեքստիլ ընկերությունների համար բիզնես գործընթացների բարելավման խորհրդատվական ծառայությունների ծախսերի 50%-ը՝ եթե շահառու տեքստիլ ընկերությունն ապահովել է աշխատանքի մեկ ժամում ավելացված արժեքի առնվազն 10%-ի աճ:	Աշխատանքի մեկ ժամում ավելացված արժեքի աճը հաշվարկվում է խորհրդատվություն մատուցված տարվա և դրան նախորդող տարվա համեմատ																		Էկոնոմիկայի նախարարություն	Տարվա ընթացքում շահառու տեքստիլ ընկերությունների քանակը	0	2	3	4	5	20.00	30.00	40.00	50.00	**140.00**	Ծուկայական գների վրա հիմնված խորհրդատվական ծառայությունների վճար (20,000 ԱՄՆ դոլար) բազմապատկած յուրաքանչյուր տարվա շահառու տեքստիլ ընկերությունների քանակով
3.3.	Աութսորսինգի սկզբունքով ներգրավել համապատասխան ընկերություն, որը կիրականացնի Հայաստանում և թիրախային շուկաներում տեքստիլ ոլորտի հիմնական փոփոխությունների և միտումների մոնիթորինգ և կներկայացնի տարեկան թարմացումները: Փաստաթուղթը հրապարակվելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում այն հասանելի դարձնելով տեքստիլ ընկերություններին և հանրությանը:	Լիազոր մարմինը պետք է 3 տարվա պայմանագիր կնքի համապատասխան աշխատանք իրականացնող ընկերության հետ																		Էկոնոմիկայի նախարարություն	«Տեքստիլ ոլորտի հիմնական փոփոխություն-ներն ու միտումները» թեմայով տարեկան թարմացումների հրապարակումը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում		+	+	+	+	4.00	4.00	4.00	4.00	**16.00**	Յուրաքանչյուր տարվա համար շուկայական գների վրա հիմնված խորհրդատվական ծառայությունների վճար
3.4.	Կազմակերպել տեքստիլ ոլորտի բիզնես գործընթացներում գիտելիքների վրա հիմնված նորարարության և գիտահետազոտական մշակումների վերաբերյալ դրամաշնորհային մրցույթներ: Հետազոտության արդյունքները պետք է ունենան գործնական կիրառություն և կիրառվեն առնվազն մեկ տեքստիլ ընկերությունում:	1. Գրավոր նշում և նկարագրություն Հայաստանում առնվազն մեկ տեքստիլ ընկերությունում հետազոտության արդյունքների կիրառման մասին 2. Տեքստիլ ընկերության այն ցուցանիշների բարելավում, որոնց վերաբերում են հետազոտության արդյունքները																		Էկոնոմիկայի նախարարություն, Կրթության, գիտու-թյան, մշակույթի և սպորտի նախարարություն	Տարվա ընթացքում տրամադրված դրամաշնորհների քանակը	0			1	2			5.40	10.80	**16.20**	Դրամաշնորհի չափը հաշվարկվել է տրամադրված համանման դրամաշնորհների (օր. Գյուլբենկյան Օպերատոր) մոտավոր գումարների հիման վրա և կազմում է 10,000 եվրո:
3.5.	Փոխհատուցել տեքստիլ ոլորտում կիրառելի գիտական արտադրանք արտադրող լաբորատորիաների հիմնադրման ծախսերի 50%-ը																			Էկոնոմիկայի նախարարություն	Հիմնադրված գիտական լաբորատորիա-ների քանակը 1 տարվա ընթացքում	0			1	1			30.00	30.00	**60.00**	Հաշվարկը հիմված է նմանատիպ լաբորատորիաների հիմնադրման ծախսերի վրա (հաշվի առնելով մեքենաների և սարքավորումների գնումը, տարածքների վերանորոգումը և այլ կապիտալ ծախսերը) - 60,000 ԱՄՆ դոլար 1 լաբորատորիայի համար: 2025 թվականին՝ 1 լաբորատորիա, 2026 թվականին՝ 1:

3.6**	Փոխհատուցել շահառու տեքստիլ ընկերությունների կողմից վճարված շահութահարկի 50%-ը, եթե նրանք օգտագործում են նորարարական տեխնոլոգիաներ (ՆՏ) և արհեստական ինտելեկտ (ԱԻ) "խելացի" տեքստիլ արտադրանքի (հագուստի) արտադրության համար: Արտադրված "խելացի" տեքստիլ արտադրանքը (հագուստը) պետք է հաստատված լինի լիազորված մարմնի կողմից: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:	Գործընթացը ենթադրում է սահմանված պայմաններով "խելացի" տեքստիլ արտադրանք (հագուստ) համարվող ապրանքների ներկայացումը (նմուշների կամ տեխնիկական նկարագրության տեսքով) և լիազոր մարմնի կողմից դրա հաստատումը:																Էկոնոմիկայի նախարարություն, Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն	Խելացի տեքստիլ արտադրանքի (հագուստի) մասնաբաժինը ընդհանուր տեքստիլ արտադրանքի ծավալում	0%			5%	10%			0.45	1.07	**1.52**	Ոլորտի 2020 թվականի շահույթը բազմապատկվում է արտահանման աճի տեմպով մինչև հաշվարկի տարեթիվը, այնուհետև բազմապատկվում է շահառու ընկերությունների շուկայական մասնաբաժնով, հարկի դրույքաչափով և փոխհատուցման չափով:
4	**Արդիականացնել տեքստիլ արդյունաբերության արտադրական օբյեկտները**՝ ներդնելով բարձր տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն ավելի բարդ և բարձր ավելացված արժեքով արտադրանքի ստեղծմանը																											**101.31**	**355.86**	**630.09**	**733.32**	**1820.56**	
4.1.	Սահմանել առավել բարենպաստ պայմաններ շեմից բարձր տեքստիլ ընկերությունների համար սարքավորումների վարձակալության սուբսիդավորման ծրագրի ներքո ` - վարձակալության հնարավոր ժամկետը ավելացնել մինչև 5 տարի. Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																			Էկոնոմիկայի նախարարություն	Սուբսիդավորվող լիզինգի ծրագրով տրամադրված գումարների ծավալը	3,040.00	825.55	2,508.00	2,686.07	1,032.29	82.56	333.36	601.96	705.19	**1,723.06**	Սուբսիդավորվող լիզինգի ընդհանուր ծավալը հաշվարկվում է 2021 թվականի տեքստիլ սարքավորումների ներմուծման վերաբերյալ հրապարակված վիճակագրական տվյալների հիման վրա (3,800 մլն. դրամ) : Ենթադրվում է որ, առաջին տարիների ընթացքում այս ցուցանիշը աճում է, իսկ հետագա տարիներին՝ նվազում, ինչը պայմանավորված է ոլորտի զգալի տեխնիկական արդիականացման գործընթացով: Սուբսիդավորման ծախսը հաշվարկվել է սուբսիդավորվող տոկոսադրույքի հիման վրա (10%) և կուտակային է յուրաքանչյուր 5 տարվա համար:
4.2.	Փոխհատուցել տեքստիլի ոլորտի ժամանակակից տեխնոլոգիաներին վերաբերող միջազգային միջոցառումներին և ցուցահանդեսներին մասնակցության ծախսերի 50%-ը: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:	Էկոնոմիկայի նախարարությունը յուրաքանչյուր տարի հաստատում և հրապարակում է նշված միջոցառումների և ցուցահանդեսների ցանկը																		Էկոնոմիկայի նախարարություն	Հաստատված ցանկում ընդգրկված միջոցառումներին մասնակցած տեքստիլ ընկերությունների քանակը	0	10	12	15	15	18.75	22.50	28.13	28.13	**97.51**	Ճանապարհածախս (500 ԱՄՆ դոլար ավիատոմս մեկ անձի համար), գիշերակաց (800 ԱՄՆ դոլար հյուրանոց մեկ անձի համար 4 գիշերվա համար), մասնակցության վճար (3000 ԱՄՆ դոլար) - ընդհանուր առմամբ 3 անձ 1 ընկերության համար.
5	**Նպաստել տեքստիլ ոլորտում կայունության զարգացմանը**																											**177.17**	**31.04**	**42.68**	**46.29**	**297.17**	
5.1.	Փոխհատուցել ISO-ի կամ ոլորտին վերաբերող այլ հավաստագրերի համար ՏՀՀԿ երկրների ցանկացած կազմակերպություններից ստացված խորհրդատվական ծառայությունների ծախսերի 50%-ը, եթե տեքստիլ ընկերությունը ձեռք է բերում ISO կամ ոլորտին հատուկ հավաստագիր նշված երկրներից: Կազմակերպությունները պետք է ընդգրկված լինեն խորհրդատուների /խորհրդատվական ընկերությունների	Խորհրդատուների/խորհրդատվական ընկերությունների ցանկը յուրաքանչյուր տարի հաստատում է Էկոնոմիկայի նախարարությունը՝ մրցույթի արդյունքների հիման վրա:																		Էկոնոմիկայի նախարարություն	ISO կամ ոլորտին հատուկ հավաստագրեր ստացած տեքստիլ ընկերությունների քանակը տարեկան կտրվածքով	0	2	2	3	3	14.06	14.06	21.09	21.09	**70.31**	Գումարը հաշվարկվում է հաշվի առնելով հետևյալ դրույքաչափերը. 28,125 ԱՄՆ դոլար խորհրդատուի կողմից 360 ժամ տևողությամբ ծառայություն մատուցելու 251-500 աշխատող ունեցող ընկերությանը, որն ունի որակի հիմնական համակարգ: Աղբյուր՝ https://the9000store.com/articles/iso-9000-cost/

	նախապես սահմանված ցանկում: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																												
5.2.	Փոխհատուցել ՏՀՁԿ երկրներից ցանկացած կազմակերպությունից ISO-ի կամ ոլորտին հատուկ հավաստագրերի ձեռք բերման հետ կապված ծախսերի 50%-ը, եթե առաջին տարում շահառու տեքստիլ ընկերության արտահանվող տեքստիլ արտադրանքի մասնաբաժինը ՏՀՁԿ որևէ երկիր կազմում է ընդհանուր արտահանման ծավալի առնվազն 25%, 2-րդ տարում՝ առնվազն 40%, 3-րդ տարում՝ առնվազն 60%: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																					Էկոնոմիկայի նախարարություն	ISO կամ ոլորտին հատուկ հավաստագրեր ունեցող տեքստիլ արտադրող ընկերությունների ընդհանուր թիվը	11	13	15	18	21	2.50	2.50	3.75	3.75	**12.50**	Գումարը հաշվարկվում է ISO Update-ի կողմից տրամադրված "Տեղեկատվություն, ռեսուրսներ և թարմացումներ ստանդարտների և հավաստագրման ոլորտի համար" տեղեկատվական աղբյուրի հիման վրա, ըստ որի ISO հավաստագրման տարեկան ծախսերը տատանվում են 3000 ԱՄՆ դոլարից մինչև 5000 ԱՄՆ դոլար (հաշվարկը կատարվում է վերին սանդղակի հիման վրա):
5.3.	Բանակցել CEN Entity Affiliate կազմակերպության հետ՝ Հայաստանում իր ներկայացուցչությունը բացելու համար: Նախատեսվում է համաֆինանսավորել մասնաճյուղի բացման հետ կապված ծախսերի 50%-ը: CEN Entity Affiliate կազմակերպությունը պարտավորվելու է տարեկան առնվազն 3 ապրանքատեսակի համար տրամադրել CEN հավաստագրում: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																					Էկոնոմիկայի նախարարություն	CEN հավաստագրում անցած ապրանքատեսակ-ների քանակը տարեկան կտրվածքով	0	4	6	8	10	155.00	5.00	5.00	5.00	**170.00**	Գումարը ներառում է 250,000 ԱՄՆ դոլար սարքավորումների ծախսեր, 50,000 ԱՄՆ դոլար վերանորոգման ծախսեր, 10,000 ԱՄՆ դոլար CEN Entity Affiliate լաբորատորիայի անդամավճարը
5.4.	Փոխհատուցել CEN հավաստագրման ծախսերի 50%-ը, եթե 1-ին տարում շահառու տեքստիլ ընկերության կողմից CEN երկրներ (մասնավորապես ԵՄ) արտահանված տեքստիլ արտադրանքի մասնաբաժինը կազմում է ընդհանուր արտահանված ծավալի առնվազն 25%-ը, 2-րդ տարում՝ առնվազն 40-%-ը, 3-րդ տարում առնվազն 60%-ը: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																					Էկոնոմիկայի նախարարություն	ԵՄ արտահանվող տեքստիլ արտադրանքի աճի տեմպը	12%	12%	13%	14%	14%	5.00	7.50	10.00	12.50	**35.00**	Գումարը հաշվարկվում է տարեկան կտրվածքով ISO հավաստագրման ծախսերի հիման վրա՝ 5000 ԱՄՆ դոլար բազմապատկած CEN հավաստագրում ունեցող ապրանքատեսակների քանակով
5.5.	Փոխհատուցել ECO հավաստագրման ծախսերի 50%-ը, եթե շահառու տեքստիլ ընկերությունը ձեռք բերի ECO հավաստագիր:																					Էկոնոմիկայի նախարարություն	ECO հավաստագիր ունեցող տեքստիլ ոլորտի ընկերությունների ընդհանուր թիվը	4	5	6	7	8	0.61	0.61	0.61	0.61	**2.42**	Գումարը հաշվարկվել է՝ ելնելով ECO հավաստագրման ծախսերից (200 եվրոյից մինչև 2000 եվրո՝ կախված երկրից) :. Տվյալ դեպքում օգտագործվել է հավաստագրման ծախսի միջին արժեքը, բազմապատկած ECO հավաստագիր ունեցող

																															տեքստիլ ընկերությունների քանակով
5.6.**	Փոխհատուցել ECO հավաստագիր ունեցող տեքստիլ ընկերության վճարված շահութահարկի 30%-ը																			Էկոնոմիկայի նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն նախարարություն	ECO հավաստագրեր ունեցող տեքստիլ ընկերությունների մասնաբաժինը			30%	40%	50.0%		1.34	2.16	3.21	**6.70**	Ոլորտի 2020 թվականի շահույթի տվյալները բազմապատկվում են արտահանման աճի տեմպով մինչև հաշվարկի տարեթիվը, բազմապատկած շահառու ընկերությունների շուկայի մասնաբաժնով, հարկի դրույքաչափով և փոխհատուցման չափով:
5.7.**	Փոխհատուցել տեքստիլ ընկերության կողմից վճարված շահութահարկի 20% -ը, եթե շահառու ընկերության էներգիայի ընդհանուր սպառման մեջ վերականգնվող էներգիայի մասնաբաժինը 50%-ից ավելի է:																			Էկոնոմիկայի նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Արտադրության միավոր արժեքի համար հաշվարկված էլեկտրաէներ-գիայի ծախսերը	2%		1.8%	1.6%	1.3%		0.03	0.07	0.13	**0.23**	Ոլորտի 2020 թվականի շահույթի տվյալները բազմապատկվում են արտահանման աճի տեմպով մինչև հաշվարկի տարեթիվը, բազմապատկած շահառու ընկերությունների շուկայի մասնաբաժնով, հարկի դրույքաչափով և փոխհատուցման չափով:
6	**Նպաստել և խթանել հայկական ապրանքանիշերի զարգացմանն ու արդյունավետ կառավարմանը**																									**216.97**	**316.10**	**423.52**	**494.67**	**1,451.26**	
6.1.	Փոխհատուցել մտավոր սեփականության իրավունքների գրանցման և պաշտպանության ծախսերի 50%-ը (առևտրային նշան, արտոնագիր, արդյունաբերական դիզայն), եթե դա իրականացվել է հայկական ապրանքանիշի ստեղծման նպատակով: Փոխհատուցումը ներառում է նաև ՏՀԶԿ երկրներում հայկական ապրանքանիշերի մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ դատական գործընթացի ծախսերը:	Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը ենթադրում է մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ դատավարության ծախսերի ծածկում																		Օպերատոր Էկոնոմիկայի նախարարություն	Գրանցված հայկական ապրանքանիշերի ընդհանուր թիվը	30	35	40	45	50	1.38	1.38	1.38	1.38	**5.50**	Հաշվարկը հիմնված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի տրամադրած տվյալների վրա: Այն ներառում է գրանցման (30.000 դրամ) և քննության (40.000 դրամ) փուլերը: Եվրոպական Միության մտավոր սեփականության գրասենյակ ներկայացված մեկ դասի առևտրային նշանի հայտի վճարը կազմում է 850 եվրո, որը համարժեք է մոտավորապես 990 ԱՄՆ դոլարի:
6.2.	Կազմել և յուրաքանչյուր տարի հրապարակել մտավոր սեփականության իրավունքներ գրանցած հայկական ապրանքանիշերի ցանկը Օպերատոր ի պաշտոնական կայքում:																			Օպերատոր	Թարմացված ցանկը հրապարակվում է տարեկան կտրվածքով		+	+	+	+					**-**	Նշված տեխնիկական առաջադրանքները գտնվում են Օպերատորի կամ նախարարության պատասխանատվության գոտում և ծախսեր չեն նախատեսում
6.3.	Աութսորսինգի սկզբունքով ընտրված մարքեթինգային ընկերության օգնությամբ կազմակերպել մարքեթինգային արշավներ (կարճ տեսանյութեր, հարցումներ և այլն) : Նշված ընկերությունը օգնելու նաև արդյունավետ իրականացնել հետագա գործողությունները	1. Լիազորված մարմինը պետք է կնքի 3 տարվա պայմանագիր աութսորսինգի սկզբունքով ընտրված մարքեթինգային ընկերության հետ: 2. Մարքեթինգային ընկերությունը պետք է ներկայացնի կազմակերպված արշավների վերաբերյալ հաշվետվություն																		Օպերատոր, Էկոնոմիկայի նախարարություն	Ոլորտի վերաբերյալ տարեկան հարցումներ		+	+	+	+	45.00	45.00	45.00	45.00	**180.00**	Գումարը ներառում է շուկայական գների հիման վրա մարքեթինգային ընկերության աութսորսինգի (տարեկան 40 մլն դրամ) և հետազոտության (տարեկան 5 մլն դրամ) ծախսերը: Հարցման մասնակիցների կառուցվածքը՝ 800 անհատ՝ յուրաքանչյուրի համար 3000 դրամ և 200 ձեռնարկություն/ընկերություն՝ յուրաքանչյուրի համար 12000 դրամ:

6.4.	Ընտրված մարքետինգային ընկերության օգնությամբ Հայաստանում կազմակերպել նորաձևության ոլորտի առնվազն 2 միջոցառում, որից առնվազն 1 միջազգային նորաձևության միջոցառում, ինչպիսիք են օրինակ նորաձևության շաբաթները, նորաձևության մրցանակաբաշխությունները և այլն: Եթե գրանցված տեքստիլ ընկերությունների քանակը համապատասխանում է պարտադիր նվազագույն թվին՝ ապա փոխհատուցվում են մասնակցության հետ առնչվող ծախսերը հետևյալ սկզբունքով՝ 10% տեղական և 35% միջազգային ապրանքանիշերի դեպքում:	1. Նորաձևության միջոցառմանը մասնակից տեղական ապրանքանիշերի նվազագույն քանակը 8 է: 2. Փոխհատուցման ծածկումը կարող է ավելացվել մինչև 10%, եթե նորաձևության միջոցառումը կազմակերպվում է մարզերում																			Էկոնոմիկայի նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Օպերատոր	Տարվա ընթացքում նորաձևության միջոցառումներին մասնակցած ապրանքանիշերի սեփականատե-րերի թիվը	0	8	13	20	25	35.20	41.13	48.55	48.55	**173.43**	Գումարը ներառում է նորաձևության միջոցառումների համար նախատեսված բյուջեն (30 մլն դրամ 2 միջոցառման համար՝ հաշվի առնելով շուկայում նմանատիպ միջոցառումների կազմակերպման ծախսերը) և տեղական ու միջազգային ապրանքանիշերի համար ընդունված ծախսածածկման փաթեթը: Մասնակցության արժեքը մեկ ապրանքանիշի համար կազմում է 100.000 դրամ (ներառյալ մոդելային գործակալության ծախսերը՝ 5.000.000 դրամ, մարքեթինգի ծախսերը՝ 1.500.000 դրամ, ճանապարհածախսը և կացության ծախսերը՝ 2.500.000 դրամ): Մասնակցության ծախսերը ծածկվում են հետևյալ սկզբունքով՝ 10% տեղական և 35% միջազգային ապրանքանիշերի համար: Նորաձևության միջոցառմանը մասնակցելու տեղական ապրանքանիշերի նվազագույն թիվը 8-ն է:
6.5.	Եվրոպայի առաջատար նորաձևության քոլեջներում և դպրոցներում առավելագույնը 1 տարի տևողությամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար մրցութային հիմունքներով տրամադրել առնվազն 3 կրթաթոշակ հայ դիզայներներին: Վերապատրաստումից հետո շահառու դիզայներները պետք է աշխատեն Հայաստանում նորաձևության ոլորտում առնվազն 3 տարիների ընթացքում և/կամ ստեղծեն հայկական բրենդ:	1. Կրթաթոշակը ներառում է շահառուի կրթական ծախսերի 50%-ի չափով և ճանապարհածախսի ու կացության ծախսի 30%-ի չափով համաֆինանսավորում 2. Դիզայներների վերադարձը Հայաստան ապահովելու համար լիազոր մարմինը պետք է նրանց հետ կնքի համապատասխան պայմանագիր: 3. Պայմանագրի ավարտին դիզայներները պետք է ներկայացնեն հայկական տեքստիլ ոլորտի ցանկացած ընկերությունում աշխատանքի վերաբերյալ փաստաթղթային ապացույցներ և 3 տարվա ընթացքում համատեղ արտադրության արդյունքում ստեղծված ապրանքների և հավաքածուների մասին տեղեկություն: 4. Նորաձևության առաջատար քոլեջներում և դպրոցներում անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների նկարագրությունը սահմանվում է Հայաստանի Նորաձևության և Դիզայնի Պալատի կողմից																			Էկոնոմիկայի նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Տարվա ընթացքում կրթաթոշակի համար դիմումների քանակը		20	40	60	80	57.09	59.94	62.94	66.09	**246.07**	Կրթաթոշակը ներառում է ուսման վարձը (25.000 եվրո) և կացության ծախսերը (ամսական 800 եվրո): Ծախսերը տարեց տարի ավելացվել են 5%-ով.

6.6.	Համաֆինանսավորել խոշոր շուկաներում նորաձևության լավագույն միջազգային միջոցառումներին մասնակցող հայկական ապրանքանիշերին՝ փոխհատուցելով մասնակցության ծախսերի 50%-ը և ճանապարհածախսի ու կացության ծախսերի 30%-ը, եթե ապրանքանիշը համապատասխանում է սահմանված պահանջներին և եթե միջոցառումն ընդգրկված է առաջարկվող ցանկում:	1. Հայկական ապրանքանիշը կարող է օգտվել տվյալ արտոնությունից, եթե հաշվետու տարում արտահանել է առնվազն 500.000 ԱՄՆ դոլարի տեքստիլ արտադրանք իր ապրանքանիշի անվան տակ 2. Նորաձևության միջոցառումների առաջարկվող ցանկը սահմանվում է Էկոնոմիկայի նախարարության և ոլորտի Օպերատորի կողմից և հրապարակվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:																	Էկոնոմիկայի նախարարություն, Օպերատոր	Առաջարկված լավագույն միջազգային նորաձևության միջոցառումներին մասնակցած Հայկական ապրանքանիշերի քանակը տարեկան կտրվածքով	Մոտ 10 ապրանքանիշ մոտակա տարիների ընթացքում	4	6	8	10	45.70	68.55	91.40	114.25	**319.90**	Ճանապարհածախս (500 ԱՄՆ դոլար ավիատոմս մեկ անձի համար), գիշերակաց (1400 ԱՄՆ դոլար հյուրանոց մեկ անձի համար, 7 գիշերվա համար), մասնակցության վճար (40000 ԱՄՆ դոլար) - ընդհանուր առմամբ 1 ընկերության/ապրանքանիշի կողմից 3 անձի համար
6.7.	Համաֆինանսավորել միջազգային նորաձևության ամսագրերում հայկական ապրանքանիշերի ներկայացուցչական ծախսերի 30%-ը , եթե ամսագիրը ներառված է առաջարկվող ցանկում, կամ եթե նորաձևության ամսագրի ազդեցության գործակիցը/ազդեցության միավորը, եթե այդպիսին գոյություն ունի, առնվազն 1,9 է,: Հայկական ապրանքանիշը պետք է համապատասխանի նախնական սահմանված պահանջներին:	1. Հայկական ապրանքանիշը կարող է օգտվել նշված արտոնությունից, եթե հաշվետու տարում արտահանել է առնվազն 500.000 ԱՄՆ դոլարի տեքստիլ արտադրանք տվյալ ապրանքանիշի անվան տակ: 2. Նորաձևության ամսագրերի առաջարկվող ցանկը սահմանվում է Էկոնոմիկայի նախարարության և Օպերատորի կողմից և հրապարակվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում																	Էկոնոմիկայի նախարարություն, Օպերատոր	Առաջարկվող միջազգային նորաձևության ամսագրերում ներկայացված հայկական ապրանքանիշերի ընդհանուր թիվը	6		8	11	15		60.00	90.00	120.00	**270.00**	Գումարը հաշվարկվում է միջազգային նորաձևության ամսագրում գովազդ տեղադրելու ծախսերի հիման վրա ($200.000 մեկ ամբողջական էջի համար):
6.8.	Ստեղծել դրամաշնորհային մրցանակաբաշխության համակարգ որով խրախուսվելու են Հայաստանի լավագույն 3 արտահանող ապրանքանիշերը: Մրցանակաբաշխությունը կանցկացվի յուրաքանչյուր տարի: Ապրանքանիշերը պետք է համապատասխանեն նախապես սահմանված պահանջներին	Հայկական ապրանքանիշը կարող է շահառու համարվել, եթե նախկինում գրանցել է իր մտավոր սեփականության իրավունքները																	Էկոնոմիկայի նախարարություն, Օպերատոր	Հայկական ապրանքանիշի անվան տակ արտահանվող տեքստիլ արտադրանքի մասնաբաժինը տարեկան արտահանվող տեքստիլ արտադրանքի ընդհանուր ծավալում	0	3	7	11	15	15.00	15.00	15.00	15.00	**60.00**	Մեկ ապրանքանիշի համար նախատեսվող դրամաշնորհը կազմում է 5 մլն. դրամ
6.9.	Կազմակերպել և համաֆինանսավորել տեղական դիզայներների և ոլորտի այլ մասնագետների վերապատրաստման համար միջազգային փորձագետ հրավիրելու ծախսերի 50%-ը, եթե դասընթացների մասնակիցների թիվը համապատասխանում է սահմանված նվազագույն պահանջին:	1. Վերապատրաստման ծախսերի 50%-ը պետք է հոգա լիազոր մարմինը, իսկ 50%-ը՝ շահառու տեքստիլ ընկերությունները: 2. Տեքստիլ ընկերությունների և ապրանքանիշերի մասնակիցների նվազագույն թիվը՝ 20 է:																	Էկոնոմիկայի նախարարություն, Օպերատոր	Տարվա ընթացքում մասնակցած տեքստիլ ոլորտի մասնագետների թիվը	0	20	20	20	20	2.60	2.60	2.60	2.60	**10.40**	Գումարը ներառում է տարածքի վարձակալության ծախսերը (200.000 դրամ) և միջազգային փորձագետի ամսեկան աշխատավարձի (5 մլն դրամ համաձայն Glassdoor Data-ի) 50%-ը
6.10.1.	Շահառու տեքստիլ ընկերություններին համաֆինանսավորել արդյունավետ բրենդային կառավարում իրականացնելու նպատակով հրավիրված միջազգային փորձագետի ծախսերի 50%-ի չափով: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար																		Էկոնոմիկայի նախարարություն, Օպերատոր	Ներգրավված միջազգային փորձագետների թիվը	0	1	2	3	4	7.50	15.00	22.50	30.00	**75.00**	Գումարը ներառում է հայկական տեքստիլ ապրանքանիշերում / ընկերություններում բրենդային կառավարում իրականացնող միջազգային փորձագետի 3 ամսվա աշխատավարձը (ամսեկան 5 մլն դրամ), որը հաշվարկվել է Glassdoor-Data-ի տվյալների հիման վրա:

6.10.2.	Տեքստիլ այլ ընկերություններին համաֆինանսավորել բրենդային կառավարում իրականացնելու նպատակով հրավիրված միջազգային փորձագետի ծախսերի 20%-ի չափով:																			Էկոնոմիկայի նախարարություն, Օպերատոր	Ներգրավված միջազգային մասնագետների թիվը	0	1	1	2	3	7.50	7.50	15.00	22.50	**52.50**	Գումարը ներառում է հայկական տեքստիլ ապրանքանիշերում/ ընկերություններում բրենդային կառավարում իրականացնող միջազգային փորձագետի 3 ամսվա աշխատավարձը (ամսեկան 5 մլն դրամ), որը հաշվարկվել է Glassdoor -Data - ի տվյալների հիման վրա:
6.11.**	Փոխհատուցել տեքստիլ ընկերության կողմից վճարված շահութահարկի 30%-ը, եթե ընկերությունը համագործակցում է հայկական անկախ ապրանքանիշի հետ համատեղ տեխնիկական նախագծման կամ ճարտարագիտության ոլորտում, և եթե համատեղ արտադրված արտադրանքի վաճառքի մասնաբաժինը կազմում է շահառու ընկերության ընդհանուր վաճառքների առնվազն 10%-ը:																			Էկոնոմիկայի նախարարություն, Օպերատոր	Հայկական անկախ ապրանքանիշերի քանակը, որոնք թողարկում են տեքստիլ ընկերությունների հետ համատեղ արտադրանք	0			5	10			0.16	0.31	**0.46**	Ոլորտի 2020 թվականի շահույթի տվյալները բազմապատկվում են արտահանման աճի տեմպով մինչև հաշվարկի տարեթիվը, բազմապատկած շահառու ընկերությունների շուկայի մասնաբաժնով, հարկի դրույքաչափով և փոխհատուցման չափով:
6.12.	Բանակցել և հրավիրել ՏՀՀԿ երկրներում գործող նորաձևության ոլորտի ոճային, նորարարական, տեխնիկական և այլ լուծումների վերաբերյալ ծառայություններ մատուցող միջազգային կենտրոններին (Fashion styling houseu) Հայաստանում հիմնելու իրենց ներկայացուցչությունը: Համաֆինանսավորվում է ներկայացուցչության հիմնադրման հետ կապված կապիտալ ծախսերի 50%-ը:																			Էկոնոմիկայի նախարարություն, Օպերատոր	ՏՀՀԿ երկրներում գործող միջազգային ոճավորման տների կողմից Հայաստանում հիմնած ներկայացուցչու-թյունների ընդհանուր քանակը	0			1	2			29.00	29.00	**58.00**	Միջազգային նորաձևության ոճավորման տուն հիմնադրելու հետ կապված կապիտալ ծախսերի հաշվարկները հիմնված են ստորև բերված ենթադրությունների վրա. - ներառվել են անձնակազմի համար գրասենյակային սարքավորումների ձեռքբերման ծախսերը (10 նոութբուք՝ յուրաքանչյուրը 1500 ԱՄՆ դոլարով, տպիչ՝ 700 ԱՄՆ դոլար, 10 աշխատատեղերի համար նախատեսված կահույք՝ 1500 ԱՄՆ դոլար մեկ նստատեղի համար) (աղբյուր՝ ZigZag և Shin Plaza), - Երևան քաղաքի կենտրոնում գրասենյակի վարձակալություն՝ միջին շուկայական գների համաձայն՝ ամսեկան 1,000,000 դրամ 1 տարվա համար (real-estate.am), - գրասենյակի վերանորոգում և ձևավորում մոտ 50.000 ԱՄՆ դոլար (Pinterest) - ոճավորման տան սարքավորում 20000 ԱՄՆ դոլար (Pinterest)
7	**Դիվերսիֆիկացնել մատակարարման շղթան (հումքի շուկաներ) ՝ շուկայի կայունությունը բարձրացնելու և այն հավասարակշռելու նպատակով**																									**65.25**	**136.00**	**162.63**	**187.75**	**551.63**	
7.1.	Տարեկան կտրվածքով պատրաստել և հաստատել շուկայի միտումների, երկկողմ քաղաքական և տնտեսական հարաբերությունների, լոգիստիկ կապերի, հարկային և իրավական հատկանիշների վերլուծության վրա հիմնված տեքստիլ հումքի ներմուծման համար առավել բարենպաստ երկրների հատուկ ցանկ:	Այս ցանկում առաջին հերթին պետք է դիտարկել Ուզբեկստանը՝ որպես տարածաշրջանի տեքստիլ հումքի խոշորագույն արտահանողներից մեկը																	Էկոնոմիկայի նախարարություն	Տեքստիլ հումքի ներմուծման համար առավել բարենպաստ երկրների հաստատված տարեկան ցանկը	-	+	+	+	+	4.00	4.00	4.00	4.00	**16.00**	Շուկայական գներով հաշվարկված խորհրդատվական ծառայությունների վճար.

| | | |

	կազմում է առնվազն 30% և խորհրդատուները ընդգրկված են նախապես սահմանված ցանկում:																														
8.3.	Սփյուռքահայ դիզայներների համար ստեղծել դրամաշնորհային համակարգ՝ համաֆինանսավորելով ճանապարհածախսի և 6 ամիսների կացության ծախսերի 80%-ը , եթե նրանք 3 տարի կաշխատեն հայկական տեքստիլ ոլորտի ցանկացած ընկերության կամ հայկական ապրանքանիշի հետ:	Լիազորված մարմինը պայմանագիր է կնքում սփյուռքահայ դիզայներների հետ հետևյալ պայմաններով. 1. Շահառու դիզայներները պետք է աշխատեն հայկական ցանկացած տեքստիլ ընկերությունում կամ հայկական որևէ ապրանքանիշի համար առնվազն 3 տարի: 2. Պայմանագրի ավարտին դիզայներները պետք է ներկայացնեն ցանկացած հայկական տեքստիլ ընկերությունում աշխատանքի ապացույցներ և 3 տարվա ընթացքում համատեղ արտադրության արդյունքում ստեղծած արդյունքների և հավաքածուների մասին տեղեկություններ:																	Օպերատոր, Էկոնոմիկայի նախարարություն, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ	Սփյուռքի շահառու դիզայներների թիվը տարեկան կտրվածքով	Մոտ 5 (նախորդ տարվա ընթացքում)			2	3			5.20	7.80	**13.00**	Գումարը ծածկում է ճանապարհածախսը (500 ԱՄՆ դոլար մեկ անձի համար) և կացության ծախսերը (ամսական 1000 ԱՄՆ դոլար):
8.4.	Համաֆինանսավորել միջազգային ցուցահանդեսներում տեքստիլ ընկերությունների մասնակցության ծախսերի 50%-ը և ճանապարհածախսի 30%-ը, եթե շահառու ընկերության կողմից արտահանվող տեքստիլ արտադրանքի աճի տեմպը կազմել է առնվազն 10%: Միջոցառումը նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																		Օպերատոր, Էկոնոմիկայի նախարարություն	Միջազգային ցուցահանդես-ներին մասնակցած հայկական տեքստիլ ընկերությունների և ապրանքանիշերի քանակը տարեկան կտրվածքով	Մոտ 7 (նախորդ տարվա ընթացքում)	4	8	11	15	14.42	28.84	39.66	54.08	**136.99**	Հաշվարկը հիմնված է հետևյալ ծախսերի վրա՝ ստենդի վարձույթ՝ 3500 ԱՄՆ դոլար, ստենդի կառուցում՝ 5600 ԱՄՆ դոլար, անձնակազմ (ներառյալ ճանապարհածախս՝ 500 ԱՄՆ դոլար մեկ անձի համար և կացության ծախսերը՝ 1400 ԱՄՆ դոլար մեկ անձի համար) ՝ 3 հոգուց բաղկացած պատվիրակության համար, առաջխաղացում (փոստային, գովազդային, հավելավճարների ծախսեր և այլն)- 2000 ԱՄՆ դոլար 1 ընկերության համար:
8.5.	Փոխհատուցել տեքստիլ ընկերությունների կողմից պահեստային տարածքներ օգտագործելու հետ առնչվող ծախսերի 30%-ը, եթե հայկական ապրանքանիշի անվան տակ արտահանվող արտադրանքի մասնաբաժինը 50%-ից ավելի է.																		Օպերատոր, Էկոնոմիկայի նախարարություն	Պահեստային տարածքների քանակը	0			2	4			39.60	79.20	**118.80**	Գումարը ծածկում է հաստատված տարածքով պահեստների վարձավճարը, որը կազմում է ամսեկան 10,000 եվրո՝ հիմք ընդունելով ԵՄ պահեստային գույքի վարձակալության շուկայական գները (աղբյուր https://search.savills.com/list/commercial/property-to-let/retail/europe).
8.6.	Սուբսիդավորել տեքստիլ ընկերությունների կողմից ներգրավված առևտրի ֆինանսավորման վարկային գործիքների տոկոսադրույքի 10%-ը, եթե վարկն օգտագործվում է Էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված հատուկ ցանկում ընդգրկված երկրներից դեպի այլ երկրներ (ոչ ԵՄ և ոչ Ռուսաստան) տեքստիլի արտահանումը ֆինանսավորելու համար: Միջոցառումը																		Էկոնոմիկայի նախարարություն	Առևտրի ֆինանսավորման սուբսիդավորվող վարկերի ծավալը	0	2,223.55	6,670.65	13,341.29	22,680.20	222.35	667.06	1334.13	2268.02	**4,491.57**	Հաշվարկը հիմնված է դեպի այլ երկրներ արտահանման կանխատեսման վրա (2021 թվականին այլ երկրներ արտահանումը կազմել է 1,9 մլն ԱՄՆ դոլար) ՝ հաշվի առնելով առևտրի ֆինանսավորման վարկերի 10% սուբսիդավորումը

	նախատեսված է շեմից բարձր ընկերությունների համար:																													
8.7.	GS1 Global-ի կողմից Հայաստանում միակ լիազորված կազմակերպության՝ GS1 Armenia-ի վերաբերյալ հայտ ներկայացնել Հայաստանի Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին (ՏՄՊՊՀ)՝ շուկայի մենաշնորհային ռիսկերը կանխելու նպատակով հետաքննություն սկսելու համար:(GS1 Global-ը ամբողջ աշխարհում շտրիխ կոդավորումը վերահսկող համաշխարհային մենաշնորհ է)																			Էկոնոմիկայի նախարարություն	Շտրիխ կոդավորման ամենաբարձր նախնական վճարը, ՀՀ դրամ	12,000.00	10,000.00	5,000.00	5,000.00	5,000.00					-	Նշված տեխնիկական առաջադրանքները գտնվում են Օպերատորի կամ նախարարության պատասխանատվության գոտում և ծախսեր չեն նախատեսում
9	**Հավասարակշռել տեքստիլ արդյունաբերության զարգացումը Հայաստանի բոլոր մարզերում՝ մասնավորապես ռազմավարական նշանակություն ունեցող և սահմանամերձ տարածքներում՝ նպաստելով երկրի հավասարաչափ սոցիալ-տնտեսական զարգացմանը:**																									**65.01**	**160.84**	**263.65**	**307.00**	**796.50**	
9.1.	Հայաստանի սահմանամերձ և հատուկ տարածքներում գործող տեքստիլ արտադրությունների համար սահմանել ավելի ցածր մակարդակի Ավելացված արժեքի տարեկան շեմը																				Էկոնոմիկայի նախարարություն	Շահառու տեքստիլ արտադրություն-ների քանակը	4.00	10.00	12.00	15.00	17.00					-	Նշված տեխնիկական առաջադրանքները գտնվում են Օպերատորի կամ նախարարության պատասխանատվության գոտում և ծախսեր չեն նախատեսում
9.2.	Համաֆինանսավորել Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում գործող տեքստիլ արտադրություններին բիզնեսի ընդհատման և ակտիվների կորստի ապահովագրական վճարների 70%-ի չափով																				Էկոնոմիկայի նախարարություն	Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում գործող տեքստիլ արտադրություն-ների մասնաբաժինը	10%	12%	13%	15%	15%	14.85	20.40	28.40	33.83	**97.47**	Հաշվարկը հիմնված է տարածաշրջանում բիզնեսի ընդհատման և ակտիվների կորստի ապահովագրության միջին արժեքի վրա՝ հաշվի առնելով Հայաստանի սահմանամերձ շրջաններում արտադրության ծավալը (ապահովագրական գումար), որը կազմում է ապահովագրված ակտիվի 5%-ը (Ռոսգոսստրախ Ռուսաստանի տվյալներ)
9.3.	Սահմանել Հայաստանի սահմանամերձ և հատուկ տարածքներում գործող տեքստիլ ընկերությունների սարքավորումների վարձակալության սուբսիդավորման հաստատված ծրագրի առավել բարենպաստ պայմաններ. - սուբսիդավորել լիզինգի տարեկան տոկոսադրույքը 12%-ով. - վարձակալության հնարավոր ժամկետը ավելացնել մինչև 5 տարի																				Էկոնոմիկայի նախարարություն	Սուբսիդավորվող լիզինգի ծավալը	380.00	418.00	752.40	790.02	316.01	50.16	140.45	235.25	273.17	**699.03**	Սուբսիդավորվող լիզինգի ընդհանուր ծավալը հաշվարկվում է տեքստիլ սարքավորումների ներմուծման վերաբերյալ հրապարակված վիճակագրական տվյալների հիման վրա (3,800 մլն. դրամ), Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի արտադրության մասնաբաժինը հաշվարկվել է հետևյալ կերպ՝ առաջին տարիներին այս ցուցանիշը աճում է, իսկ հետագա տարիներին՝ նվազում, ինչը պայմանավորված է ոլորտի զգալի տեխնիկական արդիականացումով: Սուբսիդավորման ծախսը հաշվարկվել է սուբսիդավորվող տոկոսադրույքի հիման վրա

																																(12%) և կուտակային է յուրաքանչյուր 5 տարվա համար:
10	**Զարգացնել բարդ ապրանքների արտադրությունը՝ նպաստելով Հայաստանի տեքստիլ ոլորտի բարդության ցուցանիշի (PCI) բարձրացմանը**																									**92.83**	**168.43**	**241.76**	**321.51**	**824.53**	
10.1.	Հիմնվելով տնտեսական բարդության ատլասի ստանդարտների և տվյալների վրա տեքստիլ ընկերությունների հատուկ հաշվետվության մեջ (1.2.) ներառել Արտադրանքի բարդության ցուցանիշի (PCI) հաշվարկը Ընտրել PCI-ի սահմանված տարեկան շեմից բարձր ընկերությունների ցանկը, որոնք կստանան պետական աջակցություն ավելի բարենպաստ պայմաններով: Հրապարակել տարեկան ընտրված շեմը և աջակցություն ստացող ընկերությունների ցանկը:	Հիմնական շեշտը պետք է դրվի բարձր PCI ունեցող ապրանքների արտադրության վրա: Օրինակ՝ 6202 ապրանքների «Կանանց կամ աղջիկների վերարկուներ, վերարկուներ, թիկնոցներ, և այլն...» տեսակարար կշիռը պետք է բարձրանա համեմատած 6201 ապրանքների՝ «տղամարդկանց կամ տղաների վերարկուներ, վերարկուներ, թիկնոցների, և այլն...» որոնք ունեն ավելի ցածր PCI: Ավելին, 5911 ապրանքները «Տեքստիլ ապրանքներ և արտադրատեսակներ՝ տեխնիկական օգտագործման համար» տնտեսական բարդության ատլասի հետազոտության կողմից ճանաչվել է որպես ամենահեռանկարային արտադրանքը Հայաստանի տեքստիլ արդյունաբերության համար՝ ստանալով PCI-ի ամենաբարձր՝ 1,35 արժեքը:																			Էկոնոմիկայի նախարարություն	Հայկական տեքստիլի արտադրանքի բարդության ինդեքս (PCI)	-1.20	-1.20	-1.16	-1.13	-1.10					-	Նշված տեխնիկական առաջադրանքները գտնվում են Օպերատորի կամ նախարարության պատասխանատվության գոտում և ծախսեր չեն նախատեսում
10.2.	Սարքավորումների լիզինգի սուբսիդավորման հաստատված ծրագրի շրջանակներում սահմանել ավելի բարենպաստ պայմաններ ընտրված այն ընկերությունների համար, որոնք բարձրացրել են իրենց PCI-ն. - սուբսիդավորել լիզինգի տարեկան տոկոսադրույքը 12%-ով. - վարձակալության հնարավոր ժամկետը ավելացնել մինչև 5 տարի																					Էկոնոմիկայի նախարարություն	Սուբսիդավորվող լիզինգի ծրագրով տրամադրված գումարը	0	219.45	250.80	210.67	126.40	26.33	56.43	81.71	96.88	**261.35**	Սուբսիդավորվող լիզինգի ընդհանուր ծավալը հաշվարկվում է տեքստիլ սարքավորումների ներմուծման վերաբերյալ առկա վիճակագրական տվյալների հիման վրա (3,800 մլն. դրամ), PCI-ի սահմանված տարեկան շեմից բարձր ընկերությունների արտա-դրության մասնաբաժինը հաշվարկվել է հետևյալ կերպ՝ առաջին տարիներին այդ ցուցանիշը աճում է, իսկ հետագա տարիներին՝ նվազում, ինչը պայմանավոր-ված է ոլորտի զգալի տեխնի-կական արդիականացման գործընթացով: Սուբսիդավորման արժեքը հաշվարկվել է սուբսիդա-վորվող տոկոսադրույքի հիման վրա (12%) և կուտակային է յուրաքանչյուր 3 տարվա համար:

| | | |